

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ**

25 հունվարի 2008 թվականի N 116-Ն

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ  
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի «Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրման կարգը հաստատելու մասին» N 1596-Ն որոշման հավելվածի 3-րդ և 4-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրման համար դրանց կողմից մատուցվող ծառայություններին առաջադրվող տեխնիկական չափանիշները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ  
2008 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-ԻՆ

Հավելված  
ՀՀ կառավարության  
2008 թվականի հունվարի 25-ի  
N 116-Ն որոշման

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ  
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների (այսուհետ՝ հավաստագրման կենտրոններ) հավատարմագրման համար դրանց կողմից տրամադրվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերը և էլեկտրոնային թվային ստորագրությունների հետ կապված այլ մատուցվող ծառայություններ պետք է համապատասխանեն սույն փաստաթղթով սահմանված չափանիշներին:

**II. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ  
ՁԵՎԱԶՉՓԸ ԵՎ ԱԼԳՈՐԻԹՄԸ**

2. Հավատարմագրվող հավաստագրման կենտրոնների կողմից տրամադրվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերը պետք է համապատասխանեն հետևյալ ալգորիթմների ստանդարտներից որևէ մեկին՝

1) առնվազն 1024 բիտ երկարությամբ բանալի ունեցող, դիսկրետ լոգարիթմների վրա հիմնված ալգորիթմների.

2) առնվազն 512 բիտ երկարությամբ բանալի ունեցող, էլիպտիկ կորերի վրա հիմնված ալգորիթմների:

3. Հավատարմագրվող հավաստագրման կենտրոնների կողմից տրամադրվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի ձևաչափը պետք է համապատասխանի Հեռահաղորդակցության միջազգային կազմակերպության կողմից մշակված հանրային (բաց) կրիպտոգրաֆիկ բանալիների (ստուգման տվյալների) տարածման և նույնականացման չափանիշներին:

### **III. ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՊԱՐԱՏԱԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**

4. Հավատարմագրվող հավաստագրման կենտրոնների կողմից էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի տնօրինման համակարգերը, այդ հավաստագրերին համապատասխանող էլեկտրոնային թվային ստորագրությունների ստեղծման ապարատային և (կամ) ծրագրային միջոցներն ու ծառայությունների մատուցման գործընթացները պետք է համապատասխանեն Ստանդարտացման միջազգային կազմակերպության կողմից ընդունված տեղեկատվության անվտանգության կառավարման և տեղեկատվական համակարգերի անվտանգության հետևյալ սկզբունքներին՝ անհատական տվյալների գաղտնիության և այլ տեղեկատվության պատշաճ ֆիզիկական ու էլեկտրոնային պաշտպանվածության ապահովում, անվտանգության ռիսկերի արդյունավետ կառավարում, անվտանգության կանոնների ապահովումը երաշխավորող համապատասխան անձնակազմի և ապարատածրագրային միջոցների առկայություն, տեղեկատվության անվտանգության կանոնների ապահովվածության վերաբերյալ հաճախորդների և այլ շահագրգիռ անձանց իրազեկվածության ապահովում: